ՆԱԽԱԳԻԾ-Ա

Հ Ա Յ Ա Ս Տ Ա Ն Ի Հ Ա Ն Ր Ա Պ Ե Տ Ո Ւ Թ Յ Ա Ն

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«___» _____ 2013թ. №_____-Ա

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ԾԱՐԱՎ ԱՂԲՅՈՒՐԻ ՓՈՂՈՑԻ Հ.55/17 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ԴԻՄԱՑ ՎՃԱՐ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով <<Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետը և Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի հ.2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 49-րդ կետը՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Երևան համայնքի կողմից Ծարավ Աղբյուրի փողոցի հ.55/17 հասցեում կառուցվող բազմաբնակարան-բազմաֆունկցիոնալ շենքերում առկա գույքային միավորների հասցեների տրամադրման դիմաց գանձվող վճարը սահմանել 5000 ՀՀ դրամ:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ.ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

<<ԾԱՐԱՎ ԱՂԲՅՈՒՐԻ ՓՈՂՈՑԻ Հ.55/17 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ԴԻՄԱՑ ՎՃԱՐ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ>> ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

<<Երևանի պետական համալսարանի շրջանավարտների միավորում>> հասարակական կազմակերպությունը դիմել է Երևանի քաղաքապետարան՝ Ծարավ Աղբյուրի փողոցի հ.55/17 հասցեում կառուցվող բազմաբնակարան-բազմաֆունկցիոնալ շենքերում առկա 602 առանձին գույքային միավորների հասցեների տրամադրման դիմաց գանձվող վճարը 5000 ՀՀ դրամ սահմանելու խնդրանքով:

ՀՀ կառավարության 2005թ-ի դեկտեմբերի 29-ի հ.2387-Ն որոշման 49-րդ կետի համաձայն հասցեի տրամադրման ծառայությունը վճարովի է, իսկ Երևան քաղաքի ավագանու 2011թ-ի մայիսի 6-ի հ.224-Ն որոշմամբ, Երևան համայնքի կողմից անշարժ գույքի հասցեի տրամադրման դիմաց գանձվող վճարը սահմանվել է 15000 ՀՀ դրամ:

<<ԵՊՀ շրջանավարտների միավորում>> հասարակական կազմակերպությունը նախաձեռնել է <<Մատչելի բնակարան երիտասարդ մասնագետներին>> բնակարանային ապահովության սոցիալական ծրագրերը, որոնց շրջանակում Երևան քաղաքի Ծարավ Աղբյուրի փողոցի հ.55/17 հասցեում կառուցվում են բազմաբնակարան-բազմաֆունկցիոնալ շենքային համալիր, որի բնակարանները շուկայականից անհամեմատ ցածր գներով տրամադրվելու են երիտասարդ մասնագետներին:

Ծարավ Աղբյուրի փողոցի հ.55/17 հասցեում գտնվող բազմաբնակարան բազմաֆունկցիոնալ շենքում առկա է 602 առանձին գույքային միավորներ (490 բնակարան, 112 ավտոկայանատեղեր):

<<Մատչելի բնակարան երիտասարդ մասնագետներին>> ծրագիրն ունի շահույթ չհետապնդող բացարձակ սոցիալական ուղղվածություն:

Ելնելով վերոգրյալից և հաշվի առնելով նշվածը նպատակահարմար է գտնվել տվյալ դեպքում հասցեների տրամադրման դիմաց գանձվող վճարը սահմանել 5000 ՀՀ դրամ, ինչի արդյունքում նախապատրաստվել է սույն Երևան քաղաքի ավագանու որոշման նախագիծը:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ.ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ

<<ԾԱՐԱՎ ԱՂԲՅՈՒՐԻ ՓՈՂՈՑԻ Հ.55/17 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ԴԻՄԱՑ ՎՃԱՐ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ>> ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Երևան քաղաքի ավագանու «Ծարավ Աղբյուրի փողոցի հ.55/17 հասցեում գտնվող անշարժ գույքերի հասցեների տրամադրման դիմաց վճար սահմանելու մասին» որոշման նախագծի ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերում փոփոխություն կատարելու անհրաժեշտություն չկա։

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ.ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ

<<ԾԱՐԱՎ ԱՂԲՅՈՒՐԻ ՓՈՂՈՑԻ Հ.55/17 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ԴԻՄԱՑ ՎՃԱՐ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ>> ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐՈՒՄ ԵՎ ԾԱԽՍԵՐՈՒՄ ՍՊԱՍՎԵԼԻՔ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Երևան քաղաքի ավագանու «Ծարավ Աղբյուրի փողոցի հ.55/17 հասցեում գտնվող անշարժ գույքերի հասցեների տրամադրման դիմաց վճար սահմանելու մասին» որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Երևանի բյուջեում չի նախատեսվում եկամուտների և ծախսերի փոփոխություն:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ.ՄԱՐԳԱՐՅԱՆ